ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 01 » դեկտեմբեր 2025թ. No 7382 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 66-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 04/5853-25 առ 26.11.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 4 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 76-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Ռովաստատ դեղահատեր թաղանթապատ N 21307 և N 21308, Ռովաստատ Դուո դեղահատեր N 20467 և N 20523 դեղերի գրանցման հավաստագրերը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի դեկտեմբերի « 01 » - ի  N7382 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով

գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ռովաստատ | ռոզուվաստատին (ռոզուվաստատին կալցիում) | դեղահատեր թաղանթապատ | 10մգ; (28/4x7/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե` որակի և բաց թողնման հսկող, Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 33, Սզկոլնա փ., 95-054 Կսավերով, Լեհաստան- բալք արտադրող, փաթեթավորող | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., Պիենկով, 6Ա, Մ. Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 23646 (021234) 25.11.2025 |
| 2 | Ռովաստատ | ռոզուվաստատին (ռոզուվաստատին կալցիում) | դեղահատեր թաղանթապատ | 20մգ; (28/4x7/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե` որակի և բաց թողնման հսկող, Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 33, Սզկոլնա փ., 95-054 Կսավերով, Լեհաստան- բալք արտադրող, փաթեթավորող | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., Պիենկով, 6Ա, Մ. Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 23647 (021234) 25.11.2025 |
| 3 | Ռովաստատ Դուո | ռոզուվաստատին (ռոզուվաստատին կալցիում), էզետիմիբ | դեղահատեր | 10մգ+10մգ; (30/3x10/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., Պիենկով, 6Ա, Մ. Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 23648 (023914) 25.11.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Ռովաստատ Դուո | ռոզուվաստատին (ռոզուվաստատին կալցիում), էզետիմիբ | դեղահատեր | 20մգ+10մգ; (30/3x10/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., Պիենկով, 6Ա, Մ. Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 23649 (023914) 25.11.2025 |